Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Լոռու մարզի Դարպասի միջնակարգ դպրոց

Թեմա՝ «Գնահատման տեսակները և նրանց դերը ուսումնական գործընթացում»

Վերապատրաստող, մենթոր՝ Լ. Քալաշյան

Ուսուցիչ՝ Ն. Սահակյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն **3**

Գնահատում **4**

Գնահատման քաղաքականություն **7**

Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման 10 միավորային սանդղակի միավորների բնութագրիչներ **10**

Եզրակացություն **13**

Գրականություն **14**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանգուցային բառեր՝ միավորային, ուսուցանող, ներքին, արտաքին գնահատում

Կրթական համակարգը մեր երկրում դեռևս փոփոխությունների ընթացքում է և անհրաժեշտ է ներդնել նորարական մտքեր և գաղափարներ, փորձարկել դրանք և համակարգի սեփականությունը դարձնել միայն լավագույնները՝ արդյունավետները:

Գնահատումը հանդիսանում է ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահատման միջոց:

Ուսումնառության գործընթացի արդյունավետ ուսուցումը կախված է նաև արդյունավետ գնահատման համակարգից: Նոր մոտեցումներին, մեթոդներին համապատասխան գնահատումը, որով պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների և ծրագրերի կատարումը, որով ստուգվում է աշակերտների գիտելիքները,կարողությունները, ունակությունները և անձնային որակները, պետք է այսօր լինի նոր,նորացված, բարեփոխված, անաչառ, թափանցիկ, օբյեկտիվ: Կրթության որակի բարելավման համար ընտրված գնահատման համակարգը ևս խթան է կրթության որակի բարձրացմանը, բայց ուսումնառության ընթացքում բացահայտվում է գնահատման համակարգում առկա խնդիրներ, որոնք իրատեսորեն խանգարում են, խոչնդոտ են կրթության որակի արդյունավետ բարելավմանը: Հետազոտության նպատակն է ներկայացնելով գնահատման տեսակները, նպատակները, բնութագրերը, սկզբունքները, մեթոդները, ցույց տալ,որ ուսուցման գործընթացում անհրաժեշտ է կիրառել գնահատման առավել ճկուն համակարգեր, որոնք բնութագրվում են իրենց ունիվերսալությամբ, բնութագրերի հստակությամբ և օբյեկտիվությամբ: Հետազոտությունն անց է կացվել 6-րդ աշակերտների հետ՝ 8 տղա և 4 աղջիկ :

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ամփոփիչ /միավորային գնահատում, նպատակը, ձևերը, տեսակները

Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող
ես օգտագործել աշխարհը փոխելու համար:

Նելսոն Մանդելա

Գնահատումը, **արժևորումը** և **չափումը** եզրույթներ (տերմիններ) են, որոնք առնչվում են որոշակի տվյալների պարբերական հավաքման և որոշումներ կայացնելու նպատակով դրանց վերլուծության հետ, իսկ դրանց իմացությունը կարևոր է հատկապես դասավանդող ուսուցիչների համար:

Որոշ դեպքերում այդ եզրույթները ձեռք են բերել նոր իմաստներ կամ իմաստային նրբերանգներ:

Գնահատումը՝ սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Գնահատումը՝ տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները:

Արժևորումն՝ աշխատանքի, արդյունքի, երևույթի արժեքավորության կամ արժեքի մասին հիմնավորված եզրահանգում անելն է: Ուսուցիչներն արժևորում են, թե սովորողներն ինչպիսի հաջողությամբ կամ ինչ չափով են հասնում իրենց ուսումնական նպատակներին, օլիմպիադաներին կամ այլ ստուգատեսների ու մրցույթների նրանց պատրաստականության իմաստով, ինչպես նաև տարեվերջին որոշելու՝ արդյո՞ք նրանք բավարար չափով պատրաստ են հաջորդ ուսումնական տարում կրթությունը բարեհաջող շարունակելու համար, թե՞ ամռանը լրացուցիչ աշխատելու անհրաժեշտություն կա: Արժևորման հիմնավորվածությունը ամրապնդվում է որոշակի տվյալների հավաքմամբ, որոնց օգնությամբ կկայացվեն ճիշտ որոշումներ: Տվյալների հավաքման այդպիսի գործընթացն անվանվում է **չափում**, եթե օգտագործվում են քանակական տվյալներ կամ գնահատում, որը կարող է ներառել թե՝ քանակական, թե՝ որակական տվյալներ: Օրինակ՝ թեստերից (թեստային աշխատանքներից), հարցման տարբեր տեսակներից, հանձնա-

բարված նախագծերից:Ստացված թվային տվյալներն օգտագործվում են արժևորումների ընթացքում: Ուսումնական գործընթացում **գնահատումը** նշանակում է նաև քանակական

ու որակական տվյալների նպատակային հավաքում: Ուստի դա ավելի լայն ընդգրկում ունի, քան չափումը:

Ուսուցիչների համար գնահատման նպատակը, սովորաբար, սովորողների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է: Օրինակ՝ ուսուցումից հետո ուսուցիչը հայտորոշում է սովորողների առջև ծառացած դժվարությունները, փորձում է դրանք վերացնել և ապա կատարում է յուրացման աստիճանի ստուգում: Դասարանի ձեռքբերումների մակարդակը պարզելուց հետո, ելնելով սովորողների արդեն ձեռք բերած գիտելիքներից, նա ընտրում է ուսուցումը շարունակելու ճիշտ տեղը:

Միջին դպրոցում գնահատման համակարգը խթանում է սովորողների ուսումնառության գործընթացը: Սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների գնահատումը ուսուցման և ուսումնառության ողջ գործընթացի անբաժանելի մասն է կազմում: Գնահատումը միջին դպրոցում իրականացվում է հստակ չափանիշներով:

Գնահատման նպատակն է՝

- ✓ Նպաստել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը և դրանց շարունակական զարգացմանը:
- ✓ Մշտապես դիտարկել սովորողների ուսումնական գործունեությունը և արձանագրել ձեռքբերումները:
- ✓ Ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, համայնքին, նաև վերադաս մարմիններին տրամադրել լիարժեք և հավաստի տեղեկություն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի մասին:
- ✓ Դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը:
- ✓ Ծնողներին տրամադրել հիմնավորված տեղեկություն յուրաքանչյուր սովորողի ուսումնառության որակի, ձեռքբերումների և առաջընթացի մասին:

Ընթացիկ գնահատումը՝ հանրակրթության գնահատման համակարգի առաջնային և կարևոր մասն է: Ընթացիկ գնահատման նոր համակարգի համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.

ա) սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի բացահայտում, նրա ձեռքբերումների ու դժվարությունների արձանագրում, հաշվառում և վերլուծություն. բ) կրթակարգով և պետական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների իրականացման բացահայտում,

սովորողի կողմից դրանց յուրացման և տիրապետման աստիճանի շարունակական, փուլային ստուգում ու գնահատում:

Գնահատման սկզբունքները՝ Գնահատումը ուսումնառության և դրա կատարելագործման վերաբերյալ փաստեր, հավաստի տվյալներ հավաքելու շարունակական գործընթաց է. արտացոլում և տարբեր կողմերից ներկայացնում է առկա լավագույն փորձը, խթանում է սովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը:

Ընթացիկ գնահատման նոր համակարգի և արդյունավետ գնահատման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝ հավաստիություն, հիմնավորվածություն, հուսալիություն, մատչելիություն, արդարություն, թափանցիկություն: Սրանցից բխում են առանցքային հետևյալ խնդիրները՝

1. Գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողներին առավելագույնս ցուցաբերել իրենց գիտելիքները, կարողությունները, հմտությունները:
2. Գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արունավետությունը:
3. Ուսուցանող (ձևավորող) գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը:
4. Իրազեկել ծնողներին՝ իրենց երեխաների ցուցաբերած առաջադիմության ցուցանիշներին և բարձրացնել ուսումնառության գործընթացի նկատմամբ սովորողների պատասխանատվության զգացումը:
5. Նպաստել սովորողի անձնային որակների ձևավորմանն ու վարքագծի բացահայտմանը, խթանել նրա ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը:
6. Գնահատման նոր համակարգի ներդրման շնորհիվ բարձրացնել ուսուցիչների պատասխանատվության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը:

Սովորողներին գնահատելիս կարևորում եմ նաև հոգեբանական, տարիքային առանձնահատկությունները: Պետք է ինչ-որ չափով հաշվի նստենք նաև աշակերտի հետ, որպեսզի արդյունավետ հանգուցալուծում տրվի բոլոր առաջացած հարցերին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջին դպրոցում կիրառվում է **ներքին և արտաքին** գնահատման ձևերը:

Ներքին գնահատումը իրականացնում են ուսուցիչները, առարկայական հանձնախմբերը և տնօրենությունը: **Արտաքին գնահատումն** իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Գիտելիքների ստուգման ներքին և արտաքին գնահատումը, վկայում են այն, որ համեմատած ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքներին, համատեղելի չէ:

Գնահատման փուլերը: Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի.

ա) Գնահատում. ինչպե՞ս ենք բացահայտում՝ ի՞նչ գիտեն, ի՞նչ են սովորել սաները:

Միավորներով գնահատումն իրականացվում է առարկայական ուղեցույցներում զետեղված չափորոշիչների 4 խմբերի հիման վրա: Ուսումնական տարվա ընթացքում ամեն խմբին համապատասխան գնահատում կատարվում է ամենաքիչը 2 անգամ:

Ձևավորող գնահատում-*ուսուցիչը պարբերաբար իրականացնում է հետևյալ ձևերով՝ ուսուցչի դիտարկումներ, սովորողների փոխադարձ գնահատումներ և ինքնագնահատում: Այս գնահատման ընթացքում կիրառվում են տարբեր միջոցներ՝ բանավոր ելույթ, ստուգող հարցաթերթ, հաշվետվություն սովորածի շուրջ, թղթապանակի բովանդակության գնահատում և այլն:*

բ) Գրանցում (Recording). ինչպե՞ս ենք հավաքում, վերլուծում և ամփոփում տվյալները: Միավորային գնահատման (թեմատիկ ստուգողական և ընթացիկ) արդյունքները գրանցվում են էլեկտրոնային մատյանում: Կրթակարգով նախատեսված է գնահատումների 10 միավորային համակարգ, որը ճշգրիտ կարող է որոշել աշակերտների ընթացիկ, կիսամյակային, անգամ քննության գնահատականները:

գ**) Հաշվետվություն.** ինչպե՞ս ենք ներկայացնում տեղեկատվությունը կամ գնահատման արդյունքները: Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է երկու կիսամյակների գնահատականների միջին թվաբանականով: Կիսամյակային հաշվետվություն ներկայացվում է կիսամյակի վերջում, որը ներառում է՝

- տեղեկություն կիսամյակի ընթացքում սովորողի հաճախելիության մասին.
- ուսումնական գործընթացում սովորողի մասնակցության և դրսևորած նախաձեռնողականության մասին.
- սովորողների կարողությունների ձեռքբերման և դրանց դրսևորման գործընթացի մասին.
- ուսուցչի դիտարկումները և ուսումնական գործընթացի բարելավման համար տրված խորհուրդները.

- տվյալ առարկայի չափորոշիչներին համապատասխան՝սովորողի կիսամյակային գնահատականները:

Ընթացիկ հաշվետվությունները ներկայացնում են տվյալ ժամանակահատվածում սովորողի ձեռքբերումները կամ բացթողումներն ըստ չափորոշիչների, մատյանի գնահատականները, անհրաժեշտության դեպքում՝ ուսուցչի և մանկավարժի դիտարկումները և ուսումնառության բարելավման համար տրված խորհուրդները: Հաշվետվությունները գրվում են հայերենով և եթե սովորողի կամ նրա ծնողների մայրենի լեզուն հայերենը չէ, ապա այն թարգմանվում է նաև սովորողի կամ ծնողի մայրենի լեզվով:

Այսպիսով՝ արդյունավետ գնահատումը հնարավորություն է տալիս. **Սովորողներին՝**

- կիրառելով ուսումառության տարբեր ձևեր և մտածողության որակներ՝ դրսևորել գիտելիքների, հասկացությունների ընկալում և դրանք համապատասխան իրադրության մեջ կիրառելու կարողություն.
- նախապես տեղեկանալ և հասկանալ այն չափանիշները, որոնց հիման վրա պետք է գնահատվեն իրենց աշխատանքի արդյունքները, վերլուծել իրենց և ուրիշների ուսումնառությունը և բացահայտել՝ այդ գործընթացում ինչը բարելավման կարիք ունի.
- սովորածը հաղորդել կամ սովորեցնել ուրիշներին:

Ուսուցիչներին՝

- տեղեկատվություն ստանալ ուսուցման յուրաքանչյուր փուլի մասին՝ հաշվի առնելով սովորողների պահանջները և ուսուցիչների ուսումնասիրությունները.
- մշակել և զարգացնել ուսուցման արդյունավետ մոտեցումներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները, մտավոր կարողություններն ու մշակութային տարբեր արժեքները.
- համագործակցաբար վերլուծել և բարելավել սովորողների առաջընթացը: **Ծնողներին՝** Ծանոթանալ և արձագանքել երեխայի(ների) ուսումնական առաջընթացը և զարգացումն արձանագրող փաստերին և տեղեկատվությանը:

ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ **ՈՒՍՈՒՑԱՆՈՂ**

Միավորային գնահատման ներկայումս կիրառվող տեսակներն են՝

- բանավոր հարցում

- գործնական աշխատանք
- թեմատիկ աշխատանք

Ընթացիկ գնահատումն իրականացվում է ***բանավոր, գրավոր և գործնական*** եղանակներով: Կարող է իրականացվել նաև թղթապանակով:

Միավորային գնահատումը ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի: Միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական կարողությունները:

ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ 10 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են 1-ից մինչև 10 ամբողջ թվերով արտահայտվող միավորային սանդղակով:

- 1 միավոր՝ չի ցուցաբերում ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն:
- 2 միավոր՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության հետ չառնչվող տարրական գրագիտություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
- 3 միավոր՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության չափորոշչային նվազագույն պահանջների անբավարար իմացություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
- 4 միավոր՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ կամ պարզ իրադրությունում այն կիրառելու կարողություն, և այդ նյութի վերաբերյալ պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- 5 միավոր՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- 6 միավոր՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան լիարժեք իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար հայտնի մեթոդների իմացություն, միջնորդավորված քայլ ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- 7 միավոր՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար միջնորդավորված քայլ կատարելու կարողություն, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- 8 միավոր՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, միջնորդավորված քայլ, պարզ արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է ճանաչել տեղեկատվության կազմությունն ու կառուցվածքը, տրոհել այն մասերի և տեսնել այդ մասերի միջև եղած կապերը:

➢ 9 միավոր՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլ, արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել ու վերլուծել ձեռք բերած տեղեկատվությունը:

➢ 10 միավոր՝ ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն պահանջող, կողմնորոշման և կատարման համար բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, արտածում, հիմնավորում, կռահում ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել, ամփոփել ձեռք բերած գիտելիքն ու տեղեկատվությունը:

Դասարանում սովորողների ընդունակությունները խիստ տարբեր են, բայց ուսուցումը կազմակերպում են միևնույն, ընդհանուր տեմպով և ստեղծվում է անհավասար պայմաններ: Այսպիսի փաստացի առաջադիմությամբ աշակերտը կորցնում է հավատը ուսման, կյանքի և իր ուժերի նկատմամբ, մինչդեռ ուսուցումը աշխատանք է և աշակերտը գնահատվում է բավարար անարդյունք աշխատանքի համար, առանց գիտելիք ձեռք բերելու:

Համադրելով արտաքին և ներքին ստուգումները, բացահայտվում է, որ աշակերտների գիտելիքները կայուն չեն:

Գնահատականի ինչպիսին լինելուց է կախված սովորողի հետագա քայլերը: «Ի±նչ, ինչպե±ս և ինչու± գնահատել» -այս հարցերն են ամեն օր ծառանում լավ ուսուցչի առջև:

Գնահատման մեթոդներ կարող են լինել՝

ընկալումը ստուգող ոչ պաշտոնական միջոցները, երկխոսությունը կամ քննարկումը, հարցաշարը, գործնական աշխատանքը: Գնահատումը պետք է պլանավորել ոչ թե բովանդակության մեծ մասն ուսուցանելուց հետո, այլ թեմատիկ միավորի դասավանդումը պլանավորելիս: Հենց որ պարզորոշ ուրվագծվում են ուսումնառության նպատակները, հարկ է անմիջապես ուշադրությունը կենտրոնացնել գնահատման վրա:

Գնահատման գործընթացում ուսուցիչը պետք է կարևորի նաև սովորողի ինքնագնահատելու կարողությունը: Ուստի յուրաքանչյուր թեմայի ավարտին կարելի է հանձնարարել սովորողներին լրացնել ինքնագնահատման թերթիկ, թե ինչ սովորեցին թեմայի շրջանակներում:

Գնահատման ենթակա առաջադրանքներ՝

Հայտորոշիչ գնահատում՝ աշխատանք համակարգչային ծրագրի հետ:

Ուսուցանող գնահատում՝ բանավոր հարց ու պատասխան՝ թեմայի բովանդակության յուրացումը գնահատելու համար, հարցաշար (թեստ)՝ փաստական տեղեկությունների և հասկացությունների յուրացումը գնահատելու համար, ունկնդրել տեքստը, լրացնել բացթողումները և վերնագրել:

Ամփոփիչ գնահատում՝ MS Word-ի միջավայրում էսսե՝ գրավոր խոսքի կարողություն-ները գնահատելու համար:

Ընթացիկ գնահատման 10 համակարգային գործընթացի միավորային գնահատումը ամբողջովին չի բացահայտում ուսուցման օբյեկտիվ արդյունքները, չի արտացոլում սո-վորողի և դպրոցի առաջընթացի իրական պատկերը: Ընթացիկ գնահատումներից առավել հարմար է ուսուցանող գնահատումը, սա գնահատում է սովորելու, ինքնագնահատելու համար: Առաջնային չենք համարում ընթացիկ միավորային գնահատման տեսակները:

Որոշիչ են՝ ընթացիկ բանավորի, թեմատիկ գրավորի, գործնական աշխատանքի գնահատականները:

Որոշիչ միավորային այսպիսի գնահատումները դառնում են ոչ միայն միջոց, այլև մի գործիք ուսուցանող-արժևորող գնահատման համար:

Չնայած որոշիչ են և ընթացիկ, և թեմատիկ, գործնական ու ամփոփիչ հարցումների գնահատականները, կատարում ենք վերլուծություններ, քննարկումներ, մեկնաբանումներ և ճանապարհ բացում բնութագրող որակումներով տարեվերջյան ամփոփիչ հարցման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով գնահատման գործընթացը ուսուցման գործընթացի կարևորագույն բաղադրամասն է կազմում, որը կոչված է լուծելու մի շարք դիդակտիկական խնդիրներ: Վերլուծությունները ցույց տվեցին, որ առավել արդյունավետ են գնահատման այնպիսի համակարգերը, որոնք իրենց ճկունությամբ թույլ են տալիս առավելապես բացահայտել սովորողների փաստացի գիտելիքները և նպաստել դրանց բարելավմանը: Կրթության որակի, ուսուցման արդյունավետության խանգարող խոչնդոտները վերացնելու համար անհրաժեշտ է համեմատել սովորողի միավորային և ուսուցանող գնահատումները, կիրառել այն գնահատումը, որը խթանում է սովորողի կրթության և ուսուցման արդյունավետությանը, պարզում գիտելիքների յուրացման արդյունքները և առաջընթացի իրական պատկերը:Վերլուծության եզրակացությունը մեկն է՝ ուսուցումը երկկողմանի պրոցես է, որի նորմալ ընթացքը պայմանավորված է ուսուցչի և աշակերտի պարտականությունների բարեխիղճ կատարմամբ: Գնահատումը պետք է խրախուսի աշակերտին, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերի նրա կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին, այլ ոչ թե անձին: Այն փաստը, որ սովորողը չի կարողանում լուծել խնդիրը, դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին: Ուսուցչի համար գնահատումը պետք է աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու միջոց լինի: Ծնողի համար այն պետք է երեխայի առաջընթացն արձանագրելու, ինչպես նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու միջոց հանդիսանա: Գնահատում են գիտելիքներ, հմտություններ, դիրքորոշում, արժեքներ: Գնահատման արդյունքների ու վերլուծական հաշվետվությունների միջոցով բարելավվում են չափորոշիչներն ու ծրագրերը: Այսպիսով, գնահատման համակարգը դառնում է կրթության որակի վերահսկողն ու պատվիրատուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.https://shirakatsy.am/wp-content/uploads/2015/10/gnahatman_qakhakanutyun_myp.pdf 20.11.2021թ.

2. «Ինֆորմատիկայի ուսուցիչների եռօրյա վերապատրաստման ուղեցույց», ՀՀ ԿԳՆ, ԿԾԿ-ԿԱԻ, Երևան -2007թ. «Տիգրան Մեծ», էջ 4-5

3. «Ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագիր և նյութեր», Երևան, Անտարես- 2008թ. 45էջ

4. https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362 20.11.2021թ.

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, Երևան- 2009թ.

5. «Հանրակրթական պետական կրթակարգ, պետական կրթական չափորոշիչ»¦ Երևան- 2004թ.

6. https://elearning.iedf.am/course/view.php?id=629 20.11.2021թ.

7. https://elearning.iedf.am/mod/page/view.php?id=35071 , թեմա 15.1 20.11.2021թ.

8. https://elearning.iedf.am/mod/page/view.php?id=35070&forceview=1, թեմա15 20.11.2021թ.

9. Հայկ Խաչատրյան, «Մանկական հանրագիտարան», էջ 1, Երևան-2001թ.

10. «Կրթություն» շաբաթաթերթ թիվ 6, 2013թ, էջ 8-9